

Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

Ճարուհակութիւն

9) «Աղուանների» դարձը, Անինսկու ասելով, տեղի է տնեցել վրթանէսի օրով, որ Գրիգոր Լուսաւորչի երկրորդ յաջորդն էր հայոց եկեղեցու աթուռի վրայ (էջ 16): Պ. Ա.-ին ոչինչ չի ասում Գրիգորի առաքելութիւնից առաջ Աղուանքում տեղի ունեցած առաջին քարոզութեան մասին, ոչ էլ Աղուանքի թագաւորի մկրտութեան մասին Գրիգոր Լուսաւորչից, թէև ձեռին ունեցել է Մովսէս Կաղանկատուացուն: Գրիգորի ժամանակ Աղուանից աշխարհի քրիստոնէութեան մասին խօսում է նաև Գրիգոր Լուսաւորչի վարժի նորագիւտ հին բնագիրը:

10) Ներքին կեանքի, աւատական կազմութեան և առհասարակ Հայաստանի հին հասարակական կենցաղավարութեան անհասկացողութիւնը և Հայաստանում միապետական դադարներն որոնելը հեղինակին միանգամայն դրել են ծուռ հայեցակէտի վրայ և այդ բանի շնորհիւ աւելի է մեծացել Հին Հայաստանի եկեղեցական կեանքի դէպքերի գնահատութեան անճշտութիւնը, այդպէս, մանաւանդ Պապի և Ներսիսի շրջանի նկարագրութեան մէջ:

11) Գրքի վրայ ողբալի կերպով է ազդել հայերէն լեզուի չիմանալը Դաւանաբանական հատուածների թարգմանութեան անճշտութիւնները կարող են ծառայել շատ թիւրիմացութիւնների աղբիւր: Այդպէս օրինակ, յենուելով, ակնբև է, սովորական դարձած, և ուրիշ հետախոյզների կողմից էլ իւրացրած, նորագոյն հայերի անճիշտ մեկնութեան վրայ, որոնք (հայերը) հեռու են եղել պարզ հասկանալու հին-հայերէն լեզուն, պ. Ա.-ին մեղադրում է (էջ 67) Լեւոնի սօմարի հին թարգմանողին այն բանում, որ նա ումն եւ միւսն բառը թարգմանել է հայկական ումն եւ ումն, մի դարձուած, որը հայոց լեզուի

ողու համաձայն միայն շնչաւոր էակի է տրւում, և ոչ թէ անշունչ առարկայի: Մինչ իրապէս ումն շատ յաճախ գործ է դրւում նաև անշունչ առարկաների համար, մանաւանդ հելլենասիրական շրջանի յիշատակարաններում: Այդ բանից յետոյ չի կարելի զարմանալ պ. Ա.-ու համարձակութեան վրայ, երբ նա, հայոց լեզուի մասին դատելիս, այդ լեզուն չիմանալու պատճառաւ, ինքը կատուած ուրիշներից, իրան թոյլ է տալիս այդ բառական պաշարի կողմից ամենահարուստ լեզուի խեղճութեան մասին խօսել և հաստատել, իբր թէ «հայոց լեզուի համեմատական աղքատութեան շնորհիւ բնութիւն կամ էութիւն, գոյութիւն և անձնաւորութիւն հակացողութիւնները միայն բնութիւն բառով են արտայայտել»:

Բառագիտական կողմից ոչ միայն աղքատութիւն զգալի չէ, այլ ընդհակառակը, հարստութիւնն է ճնշում, որովհետև պ. Ա.-ուն հետաքրքրող դարձուածներէ մի քանիսի համար հայոց լեզուի մէջ մի քանի բառեր կան. և հայոց եկեղեցու պատմագրի պարտքը կայանում է հէնց նրանում, որ գլուխ հանի հայոց աստուածաբանական տերմինոլոգիայից, և ոչ թէ նրանում, որ արհամարհելով, այդ՝ հայ լեզուի վրայ զուր մեղադրանք բարդի:

Գիտութեան պակասութեամբն էլ հէնց բացատրւում է ոչ միայն պ. Ա.-ու տրամադրութիւնը, որ այնքան ակնյայտնի կողմնակալ է, այլ նաև նրա վերաբերմունքը դէպի առարկայի գրականութիւնը և դէպի աղբիւրները:

Հեղինակը շնորհիւ այն բանի, որ խելամուտ չէ եղել համեմատաբար նոր ժամանակուայ հայկական մտքի զանազան հոսանքներին, ընկել է կեղծ գրութեան մէջ և միջոց չի ունեցել ուղիղ ճանապարհի վրայ կանգնելու նաև այն դէպքերում, երբ նիւթերը իրենք էին նրան դէպի այդ կողմը հրում: Օրինակ, որ Ա.-ին չգիտէ, որ հայ ունիթուները, նոցա թւում նաև մեծ ծառայութիւն մատուցած մխիթարեանները, բնականաբար, մեծացնելով հայ եկեղեցու մէջ կաթողիկոսական գծերը և յամենայն դէպս այդ գծերի վրայ աւելի են ծանրացել, իսկ Ռու-

վաստանի ուսումնական հայերը հարթում էին մայրենի եկեղեցու առանձնայատկութիւնները և հնար եղածին չափ աշխատում էին ցոյց տալ յունական եկեղեցու հետ նոյնութիւնը: Ինքը պ. Ա.-ին է այդ նկատում, օրինակ էջ 183 Խողաբաւեանի աշխատութեան մէջ եղած օտարոտի սկիւնարկները, (Պատմական յիշատակարաններ հայոց եկեղեցու դաւանութեան Ա. ՊՔ, 1847 Исторические памятники въ роученія армянской церкви). Ինչ խօսք, որ հարկաւոր էր այդպիսի ձեւնարկներից օգտուել մեծ զգուշութեամբ, մինչդեռ հէնց դրանք են կազմում իմաստութեան գուբերը, որտեղից պ. Ա.-ին ոչ միայն փաստերն է քաղում, այլ ըստ էութեան նաև լուսաբանութիւնը, առանց հարկաւոր քննութեան: Ընդ խօսք մայրամիջ ցոյց տալով

ժամանակակից գրականութեան հետ հեղինակին ամենեւին ծանօթ չէ. բաւական է նկատել, որ պ. Ա.-ին ամենեւին տասից աւելի այժմապրող հայագէտների և ուսումնականների վկայութեանը չի դիմում, որոնք եւրոպայում պարագում են հայոց եկեղեցու պատմութիւնով:

Հեղինակը համարձակութիւն է աւել գրելու հայոց եկեղեցու պատմութիւնը և այն էլ, ոչ միայն ծանօթ չէ հարցերի ներկայ մշակման հետ, որոնք ուղղակի կապ ունին նրա նիւթի հետ և որ գտնւում են արեւմտեան — եւրոպական և ռուսական գրականութեան մէջ, այլ, անկասկած, ոչ մի հասկացողութիւն չունի նաև հայկական հարուստ և զանազանատեսակ ամենակարևոր աղբիւրների մասին (ըստում եմ վրացական խիստ կարևորների մասին), ինչպիսիք են հայոց եկեղեցական ժողովների և հայրապետների կանոնները, թղթերի ժողովածուները, նշանաւոր գործիչների վարքերը, ջատագովական և այլ յիշատակարաններ, որոնք Հայաստանի եկեղեցական կեանքն արտացոլում են աւելի դրական և աւելի պայծառ գոյներով: Ինչ որ պատահարար, երկրորդ ձեռքերից այդ աղբիւրներից օգտուել է, միայն ծովի միջից կաթիլներ են. Երբոր 22 — 23. Երեսներում, նկարագրելով Ներսէս կաթուղիկոսի բնաւորութիւնը՝ հիմնուած հայոց պատմագիրների վրայ, — պ.

Ա.-ին խօսում է այդ ընաւորութեան մանրամասնութեան մասին, թէ այդ ընդհանուր նկատողութիւնները, գովասանութիւնները, առանց յիշատակելու ամենաճիշտ փաստեր, արուեստական չափազանցութիւնների կերպարանք են ընդունում և կորցնում են իրենց արժէքը, որովհետև մերկացնում են այն հանգամանքը, որ Ներսիսի գործունէութեան մասին ճշգրիտ տեղեկութիւններ չեն եղել» (էջ 23), պէտք է կարծել, հաւանական, այդպէս է կարծում նաև հեղինակը, և որ նա, պ. Անինսկին, մինչև այդ դատաստանը, նախապէս իրեն նեղութիւն է տուել «փաստերի մասին հայոց աղբիւրները վերատուգել», բայց այդ մտորութիւն կլինէր: Պ. Ա.-ու վարկածները վայր ի վերոյ են: Ակներև է, նա ծանօթ չէ Ներսիսի կենսագրութեան մասին, պատմագիրներից անկախ, գոյութիւն ունեցող նիւթերին:

Պ. Ա.-ին ուրիշներին, օրին. Էմինին, ենթարկում է քննութեան այն հարցի առթիւ, թէ Սահակը չի մերժել Քաղկեդոնի ժողովը: Ակնյայտ է, պ. Ա.-ին միանգամայն անտեղեակ է Սահակի իսկական թղթին, որը հրատարակուած է Պաղեստինիան Պրավօսլաւ ժողովածուի մէջ հայերէն՝ ռուսերէն թարգմանութեամբ (Сборникъ Православнаго Палестинскаго Общества 1892. Вып. 31, т. XI. Вып. I, стр 265—279). դա ամբողջովին նուիրուած է Քաղկեդոնական ժողովի հերքմանը:

Գլխաւորապէս շնորհիւ այն հանգամանքի, որ հեղինակը ծանօթ չէ եղել հին հայկական գրականութեան զանազան հոսանքներին, նա անկարող է գտնուել հիմնովին օգտուելու այն սակաւաթիւ աղբիւրներից, որոնց հետ գործ է ունեցել: Այդ է պատճառը, որ պ. Ա.-ին ակփականել է հայկական ընդհանրացած հասկացողութիւնը Հայաստանում եղած քրիստոնէութեան ծագման մասին Գրիգոր Լուսաւորչի հետ Տրդատի օրով, և ոչ թէ գրական — պատմականը, որն ընդգծում է թէ ամենանոր ուսումնական աշխատութիւնների մէջ և թէ ամենահին հայկական յիշատակարաններում, ամենից շոշափելի Ս. Գրքի

Թարգմանութիւնների առանձնայատկութիւնների մէջ:

«Խնչու համար են», հարցնում է պ. Ա.-ին (էջ 11), «Կեսարիան ընտրել Գրիգորին եպիսկոպոս ձեռնադրելու համար» — «Հաւանական այն պարզ պատճառով, որ ինքը Գրիգորը պատկանում էր Կեսարու — Կապադովկիական եկեղեցուն», անմիջապէս պատասխանում է պ. Ա.-ին: Մեր պատմագրի գլուխը չի եկել ուրիշ, ոչ պակաս աստիճանի պարզ մեկնութիւն, և որը աւելի է հաստատում թէ հէնց Ագաթանգեղոսի պատմութիւնով, թէ ուրիշ շատ փաստերով, մանաւանդ Ս. Գրքի քննութիւնով, որ Գրիգորը ամբողջ Հայաստանի եպիսկոպոս է ձեռնադրուել նրա համար, որ նրա վարքի մէջ ունենք կեսարական միտաւորեալ առասպել յունական ծագումով, թէև հայկական մշակութեան բովից անցած:

Եւ այդ, ինչպէս այժմ է պարզուում, ոչ միայն պարզ, այլ թոյլ եմ տալիս մտածելու, նաև ամենահաւանական ճշմարտանման բացատրութիւնն է:

Նաև Գրիգորի և Տրդատի Կոստանդին կայսեր հետ միանգամայն առասպելական հանդիպումը յայտարարում է իբրև իրողութիւն (էջ 13) շնորհիւ հեղինակի անհիմն ենթադրութեանը, միայն թէ հանդիպումը ոչ թէ Հոսմումն է տեղի ունեցել, այլ «Արևելքի որևիցէ տեղում, գուցէ Նիկոմիդիայում»:

Հայոց պատմագիրների առասպելական տեղեկութիւնները պ. Ա.-ին առաջ է բերում իբրև արդէն քննութեամբ վերստուգուածներ, օրինակ այն տաճարների մասին հաղորդածները, որոնց մէջ հնդկական կուռքերին զոհ էին մատուցանում (էջ 12):

Հեղինակը (էջ 43—44 et pas.) հայոց պատրիարքների բնաւորութեան նկարագիրը փոխ է առել Փաւստոսից, որը յայտնի է իբրև յունական համակրութիւն ունեցող մի հեղինակ և որը հայոց կաթողիկոսներին յունական կամ ասորական շքրջանին պատկանելուն համեմատ — առաջիններին դրական տիպերով է ներկայացնում, երկրորդներին բացասական:

Նա կրկնում է Ե դարու դէպքերի միտաւորեալ նկարագրութիւնը, մանաւանդ հայերի ապստամբութիւնը (էջ 46), և այդ առաւել զարմանալի է նրանով, որ հեղինակը ինքը միակ իրեն մատչելի աղբիւրները յայտարարում է կամ չափազանցնում (Յղիշէն), կամ չափ չճանաչող (Ղազար), թէև այդ էլ պիտի ասել, որ պ. Ա.ու բերանում այդպիսի կարծիքը միանգամայն վայր ի վերոյ է:

Պ. Ա.ին, յափշտակուելով իւր մեկնաբանութիւններով, աղճատ ձևով է ներկայացնում հայոց պատմագիրների իսկական վկայութիւնները, այդպէս, օրինակ՝ 137 երեսում, ցանկանալով ցոյց տալ պատկերամարտութեան տարր հին—հայկական եկեղեցու մէջ, նա հաստատում է, որ սրբերի պատկերներ նկարելը հայերի մէջ աւելի շուտ զարգերի՝ քան պատկերների նշանակութիւն են ունեցել, որ «սրբերի պատկերների հետ միասին նկարում էին թռչունների, գաղանների և սողունների պատկերներ»:

Այդ—ճիշտ չէ: Թէ վրաց, այնպէս էլ հայոց եկեղեցիներում բուսական և կենդանական օրնամենտները ծառայել են իբրև զարգեր, այլաբանական կերպի տակ դնելով եկեղեցու խորհուրդները, գլխաւորապէս ծանօթ «Բարոյախօսի» գրուածքի նիւթերի հետևողութեամբ: Այդ օրնամենտներով սովորաբար զարգարում էին եկեղեցին դրսից, ինչպէս որ պարզ վկայում է Թովմա Արծրունի պատմագիրը (ՍՊԲ 298), որին պ. Ա.ին վկայութեան է կանչում: Նոյն պատմագիրը ի միջի այլոց առանձնապէս խօսում է «ոսկէպատ պատկերօք» պատկերների մասին (էջ 299, տես Зап. Вост. Отд. 1893, т. VIII, էջ 87), որի մասին լսում է պ. Ա.ին, գուցէ, չիմանալուց:

Քանի որ հեղինակն այդքան ցանցաւ պաշար ունի և դրա հետ միացած է համարձակութիւն, շատ բնական է, որ նրա դատողութիւնները դէպքերի պատճառական կապի մասին չեն ներկայացնում փաստերի տրամաբանական եզրակացութիւնները: Անհրաժեշտութիւնից ստիպուած որևէ կերպով կապել դէպքերը, հեղինակը այդ կարողացել է կատարել խիստ անհաստատ հողի վրայ՝ Հայաստանի քա-

ղաքակրթական—պատմական կեանքի աղքատիկ ծանօթութեան վրայ և միշտ յենուում է արտաքին, գլխաւորապէս քաղաքական, յաճախ, հակասական դիտաւորութիւնների վրայ, այդպէս օր. 126 երեսում հեղինակը պնդում է, որ արաբները հայերին ներշնչել են իրենց հայեացքները պատկերների և պատկերայարգութեան մասին, և միտասը տող յետոյ իմանում ենք, որ «Յազկերտ երկրադի հալածանքը պատկերների դէմ բացել է քրիստոնեաների աչքերը . . . Հայերը ընդդիմադրութեան բնական ոյժով մղուած, սկսել են պատկերայարգութիւն, այդ բանին նաշելով, իբրև նախնիքներից մնացած մի աւանդի վրայ, որը հալածում են անհաւատները»

Սակայն միշտ էլ կարելի չի եղել գտնել այդպիսի «արտաքին պատճառներ» հայոց եկեղեցական—պատմական կեանքի երևոյթների մեծագոյն մասը բացատրելու համար: Եւ նա իւր գրքի մէջ խիստ զգայուն է դէպի քաղաքական խարդաւանանքները և հնարագիտութիւնները և ուշադիր է դէպի երևակայեալ կամ իսկական ինտրիգանտների և կասկածելի անձնաւորութիւնների գործողութիւնները, որոնք ամեն երկիրներում, ամեն ժամանակ վարպետութեամբ յարմարում են հասարակական ամենատեսակ շարժումներին, պ. Ա.ին դէպքերի «ներքին պատճառները» դրել է հայկական բնաւորութեան առանձին գծերի մէջ, որի մասին, ակներև, նա ունի դարձեալ միանգամայն պատրաստի ընդհանրացած (шаблонный) հասկացողութիւն:

Ուրիշ կերպ իսկապէս լինել չէր կարող հեղինակը ոչ մի հասկացողութիւն չի ունեցել Հայաստանի տեղական կեանքի բարդ քաղաքակրթական պայմանների մասին, նրա հասարակական և դասակարգային զանազանատեսակ շահերի մասին, այդ երկրում պարբերաբար միմեանց փոխարկող ազգային թարմ ոյժերի մասին, որտեղ անկեղծ կերպով յափշտակուել են քրիստոնէական թէ տեսական և թէ գործնական հարցերով, որտեղ ստեղծել են աստուածաբանական խիստ հարուստ դրականութիւն, խիստ

կերպով Հայաստանի մակերևոյթը ծածկել են վանքերով և եկեղեցիներով, որոնք այդ շինարարութիւնը դիմել տակն էլ են մտցրել, որ ինչպէս տեսնու՞մ ենք բազմաթիւ այրերում շինած տաճարներից, մատուռներից, անասպատականների ճղնարաններից, որոնք մշակել են ինքնեւակ եկեղեցական ճարտարապետական ոճ կէն:

Եւ սախառած էր հայոց եկեղեցու առեղծուածը որոնել կամ արտաքին երևոյթների մէջ, կամ թէ առանձին անհատներին, մեծ մասամբ բացասական յատկութիւնների մէջ, գլխաւորապէս հայերի «ատելութեան», «ցասկոսութեան», «հպարտութեան», «խոցուած ինքնասիրութեան», «հակառակասիրական օգու» մէջ, մինչև անգամ «նոցա յատուկ ինքն իր գրութիւնը ոչնչացնելու շնորհքի»¹⁾ մէջ կէն. այդպէս օրինակ հայոց և վրաց եկեղեցիների բաժանման նուիրուած երեսները, այն միակ նորութիւնը, ինչ որ տուել է պ. Ա.-ին, հեռեւեալն է, որ ամեն բանի մէջ նա նկատու՞մ է միջանիսի սնապարծութիւնը, միւսների փառասիրութիւնը, ատելութիւնը, փրատորանքը, թշնամանքը կէն. կէն: Բագրատունեաց թագաւորութեան ծագումը Հայաստանում հեղինակը վերադարձել է միայն երեք «արտաքին գործոնների» (էջ 136). 2) «յոյների ձգտումը . . հայերին իրենց կողմը գրուել», 2) «գորան հակադիր՝ արաբների ցանկութիւնը՝ հայերին հեռացնել յոյներից և իրենց ազգեցութեան ներքոյ պահել», 3) «հայոց ձգտումը՝ հասնել կառարեալ աղատութեան, օգտուելով յոյների և արաբների մրցումից և շահագործելով մէկին և թէ միւսին»: «Զորքորդ նոր գործոնը» հեղինակը համարում է «հայոց նախարարների նա-

1) Այս գրքի մասին իւր ժամանակին քննական մի յօդուած է գրուել ամուսթերթիս էջերում, ուր մէջ դարձեալ ցոյց են տրուած Ա.-ու աշխատանքի խոշոր թերութիւնները: Տես Արարատ, 1902, Մալտ, էջ 355-342»

2) Ծն. երես 35. «Հայերը միշտ աչքի են ընկել իրենց գրութեանը վնասելու շնորհքի մէջ և այս անգամ էլ իրենք իրենց հաւատարիմ են մնացել» կէն:

խանձը դէպի այն մէկը, որ իրենց միջից ձգտում էր հայոց թագաւորի աստիճանին հասնելու»:

Այդ կողմից քնորոշ է թէ նա ինչպէս է հասկանում հայոց և պարսից մէջ տեղի ունեցած կրօնական պատերազմը, պատմական դրամայի այդ մի էջը, որը ծագել է քրիստոնեայ արեւելքում Դ—Ե դարերում, շնորհիւ զանազանատեսակ, ոչ միայն արտաքին քաղաքական՝ այլ ներքին, հասարակական, դասակարգային և կրօնական պատճառներու Պ. Ա-ու մեկնութիւնը (էջ 52) ոչ միայն անհիմն է, այլ իւր գծուծ ձևով ողորմելի է, եթէ նրա մեկնութիւնը մինչև անգամ համեմատելու լինինք հին հայոց պատմագիրների միակողմանի տեսութեան հետ: Առաջաւոր Ասիայի քաղաքակրթական կեանքի այդ պատմական դէպքերը, որոնք ընդգրկել են նաև Հայաստանը, պ. Ա-ին մեկնում է իբրև հիւանդոտ պատասխան «գիւրազգաց հայերի սրտերից» Պերոզ թագաւորին նոցա մասին արտայայտած արհամարհական կարծիքի պատճառաւ և իբրև «նախանձի լափումն» հայերի կողմից «դէպի այն անձինք, որոնք զուրկ լինելով ընդունակութիւններից, լաւ պաշտօնների մէջ էին»:

Ընդհանրապէս այդ Հայոց եկեղեցու Պատմութեան մէջ ոչ քննութեամբ հաստատուած գիտական նկարագրութիւն կայ, ոչ ուղիղ կերպով վերարտադրուած է հայկական աւանդական հասկացումը, դրա փոխարէն գտնում ենք համբակի մի աշխատութիւն, առանց հարկաւոր մասնագիտական կրթութեան և որը ընդհանրապէս ծանօթ չէ հայոց եկեղեցու պատմութեան աղբիւրների ժամանակակից մշակմանը:

Իբրև եղբակացութիւն պ. Ա-ու քննութեան ենթարկուած երկու աշխատութիւնների, մասնագէտին ոչինչ չեն տալ, իսկ ոչ—մասնագէտներին կարող են ներշնչել մի շարք խոշոր մոլորութիւններ»:

W. Riedel. Katalog der christlichen Schriften in arabischer Sprache von Abul-l- Barakat- Ռիսել, Աբուլ-լ-

Բարաքաթի ցուցակ արարերէն լեզուով եղած գրքերի: Այդ ցուցակը թարգմանութեամբ հրատարակուել է Nachrichten von Königl. Ges. d. Wissen. zu göttingen, 1902, heft 5, էջ 635-706):

Յուցակի մէջ հայերէն գրուածքներ յիշատակուել են. 1) Պետրոս հայ արեղայի՝ Հաստատութիւն հաստոյ ի մայրն Տեառն Քրիստոսի (էջ 661), 2) երեք ճառք Գրիգորի, եպիսկոպոսին Հայաստանի (էջ 664) և 3) երկու ճառ «Ափրոսեայ», եպիսկոպոսին Հայաստանի (էջ 665): Յուցակում մի գլուխ էլ (էջ 658-659) նուիրուած է հայերի նորմուծութիւններին:

D. H. Freiherr von Soden, Bericht über die in der Kubbet in Damaskus gefundenen Handschriftenfragmente. Գ. Հ. մրեյիւն ժոն Սոդէն: Տեղեկութիւն Դամասկոսի կուրբեթում գտնուած ձեռագիրների հատուածների մասին Sitzungsber. d. Kon. preuss. Akademie d. Wiss. XXXVIII, XXXIX, XL, 23, 30, Յուլիս, 1903, էջ 825-830), որից երևում է, որ Դամասկոսի մզկիթի թանգարանում գտնուում են բազմաթիւ «հայերէն լեզուով» (էջ 828) և սակաւաթիւ «վրացերէն լեզուով» հատուածներ, վերջիններս դեռ չեն կարգացուած: Նոյն տեղում (էջ 831-840) Հարցախը տեղեկութիւն է տուել պրոֆ. Մառի և Ջափախովի 1902 թ. արևելք կատարուած ճանապարհորդութեան մասին:

Fr. M. E. Pereira, Vida de S. Gregorio, patriarcha da Armenia. Այս աշխատութիւնը մենք արդէն յիշատակել էինք առանց կարողանալու նրա մասին շատ բան ասել. որովհետեւ մեր ձեռին չունէինք ոչ բուն աշխատութիւնը. - (տես Արարատ 1904 էջ 89-90): Այժմ առաջներս է պրոֆ. Մառի բաւական ընդարձակ զեկուցումը, որից քաղում ենք էական մասերը:

Եթովպական գրականութեան մէջ կայ՝ Մաւրս կրօնաւորական և մաւրսիոսութիւն ս. Գրիգորի Հայոց

պատրիարքի (երկու ձեռ. մէկը Բեռլինի արքայական գրաստան. ms. or. fol. 117 Համեմ. Dillmann, Verzeichniss der Abessinischen Handschriften der königlichen Bibl. zu B. Berlin 1878, էջ 56, cod. 86, № 7 և բրիտանական մուշղէյումում, ms. or. 687 և 688, Համ. Wright, Cat. of the Ethiopic manuscrite British Museum, London 1877, էջ 159-161, cod. CCLIII. № 35) գրուածքը, որը կազմում է ժԳ և ժԳ դարերից ծագած սրբերի վարքագրական ժողովածուի (gadla Samaetat) մի մասը: Հրատարակչի կարծիքով Լուսաւորչի վարքի եթովպերէնը թարգմանուած է յունարէն Ագաթանգեղոսի պատմութեան արարքերէն թարգմանութիւնից: Յունարէն բնագիրը խիստ կրճատուած էր. հաւանական դեռ արար հեղինակի կողմից, բայց այն ձևով, որ եթովպերէն թարգմանութիւնը պահպանել է պատմուածքի հետաքրքրական մասը և բանախօսութիւններից էականները, ինչ որ կայ յունական բնագրում: Թէ թարգմանութիւնը կատարուել է արաբերէնից, ապացուցուում է եթովպերէնում՝ պահուած անունների արտօրական ձևերով, որոնք միանգամայն հասկանալի են արտօրական տառերի ձայնաւորների կէտերով:

Վարքի եթովպական հեղինակի տեղը և ժամանակը յայտնի չէ, ձեռագիրը ժԵ դարուց և ըստ Պերեյրայի կարող է ծագել ժԳ վերջերից կամ ժԵ սկզբից և տեղն էլ ենթադրում է Եգիպտոս, ուր այդ ժամանակները կային հայ և հարէչ վարդապետներ (էջ 8-9):

Հարէչները Լուսաւորչի տօնը կատարում են «տահասա» ամսի 15-ին, նրա հանգստեան օրը և այդ օրն էլ կարդում են նրա վարքը: Այդ օրը յատուկ պաշտօն կայ. կարգ Սրբոյն գրիգորի (Բրիտ. Մուզ. ms. or. 545 և 546, Բեռլինի թագ. գրադ. ms. or. quart 414 և Pet. Nachricht 36. Պարիզի Ազգ. գրատ. ms. eth. 67, 74, 75 և 76): Եթովպական Յայսմաւուրքով «տահասա» 15-ին կատարում են հայոց պատրիարքի ս. Դրիգորի մահուան տօնը (Zotenberg, Cat. des manuscrits eth. de la Bibl. Nat. էջ, 168, Dillmann, Cat. cod. man. Bibl. Bodleianae Oxoniensis,

pars, VIII, cod. aeth. Oxonii 1848. էջ 48): Այս յօդուածը թարգմանութիւն է, ասում է Պերեյրան, «նոյն սրբի մասին խպտական յայտաւորքի» «կիրակ»ի 15-ին կարդացած յօդուածին (*Wüstenfeld*, *Synaxarium*, das ist Heiligen-Kalender der Coptischen Christen, Gotha 1879, էջ 182): Եթովպական Յայտաւորքի մէջ (*Zotenberg*. յօդ. էջ 156) «Մասկարամ»-ի 19-ը նշանակուած է յիշատակ ս. Գրգորի, և դրա համապատասխան յօդուածը ծագում է նրանից, որ նոյն սրբի մասին խպտական Յայտաւորքը կարդում է «տուտ»ի 19-ին (*Wüstenfeld*, յօդ. էջ 34) (էջ 9):

Յետոյ Պերեյրան յայտնում է, որ Լուսաւորչին հարէչները տօնում են «անարիւն նահատակ» և նրա անունով ճանաչում են մի գրուած՝ և խօսք յաղագս Աստուածութեան Յիսուսի Քրիստոսի գրուած ընդդէմ հրէից: Եթովպական եկեղեցու կանոնների ժողովածուի մէջ (*Բրիտ. Մուզ. ms. or. 481*, *Բեռլին թաղ. գրատ. ms. or. fol. 396* և *398*, Պար. Ազգ. գրադ. ms. eth. 95) (էջ 9—10): Բնագիրը երկու յիշած ձեռ. համեմատ. յառաջաբանը 1-11 էջ) եթովպերէն (էջ 12-23). տարբեր ընթերցուածք (էջ 24-27), պորթուգալական թարգմանութիւն (28-40 էջ) և ցանկ յատուկ անունների (էջ 41-42): Բեռլինի ձեռագրից օգտուել են առաջուց *Ludolf*, *Lexicon aethiopicolatinum* և *Winkler*, *Keimelia Bibliothecae regiae Berlinensis aethiopica descripta*, Erlangae, 1742 էջ 35 ևն. (Վերջի երեք տեղեկութիւնները քաղել ն. Մառի նկատողութիւններից. տպած. *Записки Вост. От. II. P. Арх. Qбщ. т. XV* էջ 0185-0588):

Մեծագ վարդապետ

